Վերջին երեք օրերին արդեն երկրոդ անգամ է Վեոլիա ջուրը հանդիպում լրատվամիջոցների հետ, պարզաբանելու Երեւանում ջրամատակարարման առումով ստեղծված իրավիճակը:

Ընկերության ղեկավարները, գլխավոր գործադիր տնօրեն Գոռ Գրիգորյանի գլխավորությամբ, լրագրողներին ներկայացրեցին ջրի սակավության պատճառը, հիմնականում պայմանավորված «Արարատյան 3,4» պոմպակայանում տեղի ունեցած խոշոր վթարով: Խոսվեց խնդրի լուծման նպատակով Վեոլիայի կողմից ձեռնարկված քայլերի մասին ու նշվեց, որ դժվարությունները հետեւում են: Ջրի ծավալի խնդիր այլեւս չկա, իսկ ներմայրաքաղաքային բաշխիչ ցանցը վերջնականապես կարգավորել ու սպառողներին հայտարարված գրաֆիկով ջրով հնարավոր կլինի ապահովել արդեն շաբաթ օրը: